Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ «ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ» 7-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

(10 հոկտեմբերի, 2014 թ.)

Մեծարգո Պրն Նախագահ,

Ազնվափայլ Վալերի Բուայե,

Մեծազնիվ Տիկին Նախարար.

«Հայ կանանց միջազգային միավորման» սիրելի՛ անդամներ եւ ներկաներ.

Հայրական սիրով ու ջերմ բարեմաղթանքներով ողջունում եւ շնորհավորում ենք ամենքիդ «Հայ կանանց միջազգային միավորման» 7-րդ համաժողովի գումարման առթիվ: Ուրախ ենք տեսնել, որ միավորումն իր արգասավոր աշխատանքներն է շարունակում՝ նպաստելով ողջ աշխարհում հայ կանանց միջեւ գործնական եւ բարեկամական կապերի ստեղծմանն ու ամրապնդմանը եւ համախմբելով նրանց ազնիվ ջանքերը՝ ի խնդիր հայրենիքում եւ սփյուռքում ազգային մեր կյանքի զորացման ու առաջընթացի:

Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ շուրջ 25-ամյա գործունեության ընթացքում միավորման կողմից իրականացվել են կրթական, առողջապահական, մշակութային, բարեգործական ծրագրեր ու միջոցառումներ, որոնք վկայություն են միավորման անդամների քրիստոնեական նախանձավոր ոգու եւ նրանց ազգասեր ու հայրենասեր ձգտումների:

Աստծո պատկերը տեսնելով մարդու մեջ եւ կարեւորելով նրա արժեքն ու արժանապատվությունը՝ քրիստոնեությունը փոխեց նաեւ աշխարհի վերաբերմունքը կնոջ հանդեպ: Քրիստոնեությունը բարձրացրեց կնոջ դերը ազգերի եւ հասարակությունների կյանքում: Մարդկության համար տիպար եղավ Ս. Աստվածածինը՝ վկայելով, որ կնոջ փխրուն ու նրբին հոգու մեջ թաքնված են առ Աստված հավատքի եւ ամբողջանվեր ծառայության ուժն ու գիտակցական զոհաբերության պատրաստակամությունը: Հավատավոր այդ հոգով մեր բազմադարյա եւ բազմաչարչար պատմության մեջ հայ տղամարդու կողքին մշտապես կանգնած է եղել խոնարհ, նվիրյալ եւ քաջարի հայ կինը՝ զավակներ կրթելով, ընտանիքի համար հոգալով, հարկ եղած դեպքում՝ հայրենի տունն ու երկիրը պաշտպանելով: Մեր ժողովուրդը, հիրավի, հարուստ է մեծանուն կանանցով՝ բարեգործ

թագուհիներ, իշխանուհիներ, կրթության ու գիտության, արվեստի ու մշակույթի գործիչներ: Կանայք մշտապես կարեւոր տեղ են ունեցել եւ գնահատվել նաեւ եկեղեցական-համայնքային մեր կյանքում: Այսօր անկարելի է պատկերացնել որեւէ եկեղեցու ծխական առօրյան՝ առանց ջանասեր, ազնիվ եւ հավատավոր հայ կնոջ: Մեր ժամանակի հրամայականներից ելնելով՝ կինը ոչ միայն հոգատար մայր է, ընտանիքի դաստիարակ, նվիրված կողակից, այլեւ՝ գործարար, ստեղծող ու արարող: Մեր մաղթանքն է, մեծազնի՛վ տիկնայք, որ Տերը բազմապատկի եւ առատորեն արգասավորի ասպվածատուր ձեր կարողություններն ու շնորհները, որպեսզի շարունակեք հավատավոր եւ նախանձախնդիր ոգով ի սպաս դնել մեր ժողովրդի եւ հայրենիքի առջեւ ծառացած մարտահրավերների վճռմանը եւ ազգային մեր իղձերի իրագործմանը:

Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում «Հայ կանանց միջազգային միավորման» 7-րդ միջազգային համաժողովի կազմակերպիչներիդ ու բոլոր մասնակիցներիդ: Աղոթում ենք, որ Տերը հաջողությամբ պսակի ձեր մեծ եռանդն ու ջանքերը՝ ի նպաստ համաժողովի արգասավոր աշխատանքի: Հայցում ենք, որ Ամենակարողն Աստված զորացնի եւ ծաղկյալ պահի «Հայ կանանց միջազգային միավորումը» եւ սիրասուն մեր դուստրերիդ պարգեւի քաջառողջություն, ոգու փոկունություն եւ երջանիկ կյանքի արեւշատ օրեր:

Թող Բարձրյալի ամենախնամ շնորհն ու օրհնությունը լինեն ձեզ հետ եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի՝ այսօր եւ միշտ. ամեն: